

ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԵՊԱՏԻՏ C-ի ՀԱՍԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ


Վիրուսային հեպատիտ C վարակը քրոնիկ լյարդային հիվանդության հիմնական պատճառներից մեկն է ամբողջ աշխարհում:

Ըստ ԱՀԿ-ի գնահատման, 2015 թ. աշխարհում քրոնիկ HCV վարակով ապրող մարդկանց ընդհանուր թիվը կազմել է 71 միլիոն (գլոբալ տարածվածության ցուցանիշը՝ 1%) և 399 հազարը մահացել է լյարդի ցիռոզից կամ հեպատոցեյուլար կարցինոմայից (ՀՑԿ):

Ըստ ԱՀԿ-ի 2015 թ. ախտորոշվել է HCV վարակի 1,75 մլն նոր դեպք հիմնականում ներարկային թմրամիջոցների կիրառման և ոչ անվտանգ բժշկական միջամտությունների արդյունքում:

HCV-ի տարածվածությունը հիմնված է հիմնականում շճատարածվածության տվյալների վրա, այսինքն հակա-HCV հակամարմինների առկայության վրա, որը չի տարբերակում ներկա վարակը՝ նախկին էլիմինացված վարակից: Այս սահմանափակումներով հանդերձ, ըստ մետաանալիզների, ամենաբարձր տարածվածությունը հակա-HCV-ի՝ $>3,5\%$, հայտնաբերվում է Հյուսիսային Աֆրիկայում, Կենտրոնական Ասիայում, Արևելյան Ասիայում, ամենացածրը՝ $<1,5\%$, Հյուսիսային Ամերիկայում, Ասիա-Խաղաղ օվկիանոսյան տարածաշրջանում և Տրոպիկական Լատինական Ամերիկայում: Եգիպտոսն ունի ամենաբարձր շճատարածվածությունն աշխարհում՝ 22%: ԱՄՆ-ի բնակչության 1,8%-ի մոտ հայտնաբերվում է հակա-HCV, և նրանց 74%-ի մոտ է HCV ՌՆԹ- դրական:

Ընդհանուր բնակչության մեջ HCV վարակի դեպքերն ըստ ԱՀԿ տարածաշրջանների, 2015



Նոր վարակակիրների քանակը 100,000 բնակչի հաշվով


Աֆրիկա - 31.0

Մերձավոր արևելք - 62.5

Եվրոպա - 61.8

Ամերիկա - 6.4

Հարավարևելյան Ասիա - 14.8



2017-թ.-ին գնահատվել է, որ Հայաստանի մեծահասակ բնակչության 4.0%-ը (2.9-6%) հակա-HCV դրական է: Հաշվի առնելով 70% վիրեմիկության աստիճանը (65-72%) երիտասարդ տարիքի անձանց համար հաշվարկվել է, որ վիրուսակրություն ունեն 66000 անձ (տարածվածությունը՝ 2,3%): Գոյություն ունեն երեք ռիսկային խմբեր, որոնք պարբերաբար ստուգվում են HCV-ի նկատմամբ՝ ակտիվ ներարկային թմրամիջոց օգտագործող անձիք, քաղաքային և գյուղական աշխատանքային միգրանտներ: Այս խմբերում հակա-HCV

տարածվածությունը վերջերս գնահատվել է համապատասխանաբար՝ 66.1%, 3.3% և 2.1%:

Նոր HCV դեղերի արդյունքում (ուղղակի ազդեցության հակավիրուսային պրեպարատներ) կարելի է հասնել ԿՎՊ-ի՝ HCV ավելի քան 95% -դեպքերում: Հայաստանում վարակված անձանց 45.2%-ն ունի գենոտիպ 1, իսկ 36.6%-ն ունի գենոտիպ 3: Բուժվող 1.000 անձանց մեկ խմբում ԿՎՊ-ի հաջողվել է հասնել 98% դեպքերում, սակայն ընդհանուր բնակչության մակարդակում գնահատվել է ԿՎՊ-ի 92% մակարդակ՝ բոլոր գենոտիպերի դեպքում ուղղակի ազդեցության հակավիրուսային պրեպարատներով բուժման ռեժիմների կիրառման պայմանում:

ՀՀ-ում ՉԿԱՆ ԿԱՏԱՐՎԱԾ ԼԱՅՆԱՄԱՍՇՏԱԲ ԷՊԻԴԵՄԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ